## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 20 ՀՈՒԼԻՍ 2023Թ. ԿՆՔՎԱԾ N «ԾՔ-ԲՄԱՇՁԲ-23/4» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Ծաղկաձոր «15» 08 2023թ.

**Ծաղկաձորի համայնքապետարանը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս համայնքի ղեկավար Ն. Հարությունյանի,** որը գործում է համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«Մինասյաններ Շին» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կապալառու», ի դեմս տնօրեն Գ.Մինասյանի,** որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, ցուցաբերելով երկկողմանի կամահայտնություն, հիմք ընդունելով 20 հուլիս 2023թ. կնքված N **«ԾՔ-ԲՄԱՇՁԲ-23/4»** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5-րդ և 8.15-րդ կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը համաձայնում են **«ԾՔ-ԲՄԱՇՁԲ-23/4»** պայմանագրում 2023 թվականի օգոստոսի 15-ին կատարել հետևյալ փոփոխությունները.

1.2 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը համայնքի մասնաբաժնի չափով՝ համաձայն կից հավելվածի (Հավելված 3-ը կցվում է):

1.3 Սահմանել, որ Պատվիրատուն իրականացված աշխատանքների դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կից վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին:

1.4 Սույն համաձայնագրում չնշված Գնման պայմանագրով նախատեսված դրույթները թողնվում են անփոփոխ:

1.5 Սույն համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով , 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Ծաղկաձորի համայնքապետարան | «Մինասյաններ Շին» ՍՊԸ |
| ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9 | Գեղարքունիքի մարզ,գ.Երանոս,4/26 |
| ՀՀ ՖՆ ԳՎ | <<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ |
| ՀՎՀՀ 03027029 | ՀՎՀՀ 08423306 |
| ՀՀ 900122002258 | ՀՀ 1150010718088099 |
| Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան | Տնօրեն Գ.Մինասյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 3*
*«20» հուլիս 2023թ. կնքված*
N «**ԾՔ-ԲՄԱՇՁԲ-23/4**» *ծածկագրով պայմանագրի և*
*«16» օգոստոս 2023թ. կնքված թիվ 1 համաձայնագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45241170 | «ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՅՈՒՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» | **Համայնքի մասնաբաժին /սուբվենցիա/ 40%** **Վճարումները կիրականացվեն համաձայնագրի կատարողական փաստաթղթերի հիման վրա** | | | | | | | | | | | | |
| | | | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **0** | **15 600 000** | **31 200 000** | **31 200 000** | **31 200 000** | **31 200 000** | **31 200 000** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**Ծաղկաձորի համայնքապետարան**
**ք.Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 9**
**ՀՀ ՖՆ ԳՎ**
**ՀՎՀՀ 03027029**
**ՀՀ 900122002258**
**Համայնքի ղեկավար Ն.Հարությունյան**
---
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
**«Մինասյաններ Շին» ՍՊԸ**
**Գեղարքունիքի մարզ,գ.Երանոս,4/26**
**<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ**
**ՀՎՀՀ 08423306**
**ՀՀ 1150010718088099**
**Տնօրեն Գ.Մինասյան**
---
/ստորագրություն/
Կ.Տ

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ԱԼԱՇԿԵՐՏ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ “АЛАШКЕРТ”
“ARMBUSINESSBANK” CJSC
“ALASHKERT” BRANCH

N 112 - 41

«15» Օգոստոս 2023

ԵՐԱՇԽԻՔ N E23-000899

# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի (այսուհետ բենիֆիցիար) կողմից N ժ/պ (այսուհետ բենիֆիցիար) և <<Մինասյաններ Շին>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքված N ԾՔ-ԲՄԱՇՁԲ-23/04 պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:
2. Երաշխիքով <<Հայբիզնեսբանկ>> Փակ Բաժնետիրական Ընկերության <<Ալաշկերտ>> մասնաճյուղը (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 4 236 000(չորս միլիոն երկու հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամը ներառյալ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900125002114 հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է բենիֆիցիարի և պրինցիպալի միջև կնքված N ԾՔ-ԲՄԱՇՁԲ-23/04 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պրինցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ՝առավելագույնը 27.07.2026թ.
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
1) N ԾՔ-ԲՄԱՇՁԲ-23/04 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,
2) Բենիֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը,
3) Սույն երաշխիքը:
7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 5/հինգ/ աշխատանքային օրվա քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի պահանջը, եթե՝
1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին,
2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մասնաճյուղի կառավարիչ՝ Ռ.Հարությունյան

Հաճախորդների սպասարկման ծառայության պետ՝ Ռ.Պողոսյան

Հասցե՝ ՀՀ, ք. Մարտունի, Պռոշյան փողոց 2 շենք, թիվ 18; Հեռախոս՝ (+37460) 37 25 41; Էլ.փոստ՝alashkert@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: ул. Прошян, дом 2, N18 13/14, г. Мартуни, РА; Телефон: (+37460) 37 25 41; Эл.почта: alashkert@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: N18, 2 Proshyan Str., Martuni, Armenia; Telephone: (+37460) 37 25 41; E-mail: alashkert@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
«ԱԼԱՇԿԵՐՏ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
ФИЛИАЛ “АЛАШКЕРТ”
“ARMBUSINESSBANK” CJSC
“ALASHKERT” BRANCH

N 085-41

«27» 08 2023

**ԵՐԱՇԽԻՔ N E23-000898**

**ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձորի համայնքապետարանի (այսուհետ բենիֆիցիար) կողմից N ԾՔ-ԲՄԱՇՁԲ-23/04 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում <<Մինասյաններ Շին>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքված N ԾՔ-ԲՄԱՇՁԲ-23/04 պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):
2. Երաշխիքով <<Հայբիզնեսբանկ>> Փակ Բաժնետիրական Ընկերության <<Ալաշկերտ>> մասնաճյուղը (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 12 707 000(տասներկու միլիոն յոթ հարյուր յոթ հազար) ՀՀ դրամը ներառյալ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900125002114 հաշվեհամարին փոխանցման միջոցով:
3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:
4. Սույն երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:
5. Երաշխիքը գործում է բենիֆիցիարի և պրինցիպալի միջև կնքված N ԾՔ-ԲՄԱՇՁԲ-23/04 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պրինցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ՝առավելագույնը 01.07.2024թ.:
6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝
1) N ԾՔ-ԲՄԱՇՁԲ-23/04 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,
2) Բենիֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը,
3) Սուն երաշխիքը:
7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 5/հինգ/ աշխատանքային օրվա քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:
8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի պահանջը, եթե՝
1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.
2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:
9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:
10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:
11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մասնաճյուղի կառավարիչի ժ/պ՝ Վ.Սարգսյան

Հաճախորդների սպասարկման բաժնի պետ՝ Ռ.Պողոսյան

Հասցե՝ ՀՀ, ք. Մարտունի, Պռոշյան փողոց 2 շենք, թիվ 18; Հեռախոս՝ (+37460) 37 25 41; Էլ.փոստ՝alashkert@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: ул. Прошян, дом 2, N18 13/14, г. Мартуни, РА; Телефон: (+37460) 37 25 41; Эл.почта: alashkert@armbusinessbank.am; Вев-сайт: www.armbusinessbank.am
Address: N18, 2 Proshyan Str., Martuni, Armenia; Telephone: (+37460) 37 25 41; E-mail: alashkert@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am